# ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ա մակարդակ

Ա 1 Նկար 1-ում Է տառով պատկերված է.

1) հվ. լ. 20՛ արմ. ե. 20՛
2) հս. լ. 20՛արլ. ե. 20՛
3) հվ. լ. 40՛ արլ. ե. 100՛
4) հս. լ. 20՛ արմ. ե. 20՛




Նկար 1.

Ա 2 Հասարակածի վրա գտնվող երկու կետերից մեկը գտնվում է արլ. ե. 60˚-ի, մյուսը՝ արմ. ե. 130˚-ի վրա: Նրանց միջև ամենակարճ հեռավորությունը արտահայտված կիլոմետրով կլինի

1) 14985
2) 21645
3) 21090
4) 6660

Ա 3 1 : 7 000 000 մասշտաբի քարտեզում երկու կետերի հեռավորությունը 8 սմ է: Դրանց իրական հեռավորությունը կլինի.

1) 560 կմ
2) 5600 կմ
3) 5,6 կմ
4) 56 կմ

Ա 4 Ընտրել ճիշտ պատասխանը.

1) Արեգակի ճառագայթները ուղղահայաց են ընկնում հասարակածի վրա դեկտեմբերի 22-ն:
2) Մարտի 21-ը կոչվում է գարնանային գիշերահավասարի օր:
3) Դեկտեմբերին ցերեկը հարավային բևեռում ավելի կարճ է, քան Երևանում:
4) Հս.լ. 23˚30՛ զուգահեռականից հյուսիս Արեգակի ճառագայթները հորիզոնական հարթության վրա տարվա ընթացքում ուղիղ անկյան տակ են ընկնում:

Ա 5 Հարևան գետերի ջրհավաք ավազանները իրարից բաժանող սահմանային գիծը կոչվում է.

1) հորիզոնական
2) իզոբար
3) ջրբաժան գիծ
4) գետի անկում

Ա 6 Երկու ջրային ավազանները իրար միացնող ջրային նեղ տարածությունը կոչվում է.

1) ծովածոց
2) նեղուց
3) ծով
4) փողրակ

Ա 7 Կլիմայի այն տիպը, որը բնորոշվում է մեղմ ու խոնավ ձմեռներով և շոգ ու չոր ամառներով կոչվում է.

1) ցամաքային
2) ծովային
3) մուսսոնային
4) միջերկրածովային

Ա 8 Լեռան լեռան ստորոտին օդի ջերմաստիճանը 21˚է, գագաթին՝ 3˚: Լեռան հարաբերական բարձրությունը կլինի. (հաշվարկը կատարել 6˚-ով)

1) 1500 մ
2) 2500 մ
3) 3000 մ
4) 4000 մ

Ա 9 Օվկիանոսային հոսանքները լինում են.

1) սառը
2) տաք
3) սառը և տաք
4) գոլ

Ա 10 Ո՞ր քամիների սխեման է պատկերված նկարում.




1) պասսատների
2) մուսսոնների
3) արևմտյան քամիների
4) բրիզների

Ա 11 Եվրասիայում, ո՞ր կլիմայական գոտին է զբաղեցնում ամենամեծ տարածքը.

1) արկտիկական
2) բարեխառն
3) արևադարձային
4) հասարակածային

Ա 12 Եքիդնան և բադակտուցը ապրում են

1) Եվրասիայում
2) Աֆրիկայում
3) Հարավային Ամերիկայում
4) Ավստրալիայում

Ա 13 Դա Եվրոպայի խոշոր գետերից մեկն է: Նրա ափին են գտնվում մի քանի երկրների մայրաքաղաքներ: Այդ գետն է.

1) Դնեպրը
2) Դանուբը
3) Հռենոսը
4) Սենան

Ա 14 Ընտրել սխալ պատասխանը.

1) Եվրասիայի մակերևույթը ձևավորվել է մի քանի հնագույն և երիտասարդ պլատֆորմների վրա:
2) Եվրասիայում ամենաընդարձակը Արևելաեվրոպական հարթավայրն է:
3) Եվրասիայում է գտնվում հյուսիսային կիսագնդի ամենացուրտ վայրը:
4) Արևմտասիբիրական հարթավայր Եվրասիայի ակտիվ սեյսմիկ շրջաններից է:

Ա 15 Ընտրել ճիշտ պատասխանը.

1) Կասպից լիճն ունի հրաբխային ծագում:
2) Արալյան լճի ջուրը քաղցրահամ է:
3) Սևանալիճն աշխարհի ամենախորը անհոս լիճն է:
4) Բայկալ լիճն ունի գրաբենային ծագում:

Ա 16 «Մայրցամաք-լեռնաշղթա» սկզբունքով կազմված զույգերից ընտրել ճիշտը.

1) Հարավային Ամերիկա-Կորդիլիերաներ
2) Հարավային Ամերիկա-Մեծ Ջրբաժան
3) Աֆրիկա-Ատլասի լեռներ
4) Հյուսիսային Ամերիկա- Ալպեր

Ա 17 «Բնական զոնա-կենդանատեսակ» սկզբունքով կազմված զույգերից ընտրել սխալը:

1) խոնավ հասարակածային անտառներ-շիմպանզե և գորիլա
2) սավաննաներ-ընձուղտ
3) տափաստաններ-փիղ
4) անապատներ-օձ

Ա 18 Եվրասիայում գտնվող գետեր են.

1) Վոլգան և Գանգեսը
2) Օրինոկոն և Պարանան
3) Յուկոնը և Մակենզին
4) Օրանժը և Լիմպոպոն




Ա 19 Քարտեզի վրա Պիրենեյան թերակղզին ո՞ր տառով է նշված.

1) Ա
2) Բ
3) Գ
4) Դ

Ա 20 Քարտեզի վրա Իսպանիա պետությունը ո՞ր տառով է նշված.

1) Դ
2) Է
3) Ա
4) Ը

Ա 21 Բնակության վայրը փոխելու հետևանքով բնակչության տեղափոխվելը մի տարածքից մեկ այլ տարածք կոչվում է.

1) մարդահամար
2) ագլոմերացիա
3) միգրացիա
4) բնակչության վերարտադրություն

Ա 22 Որոշակի տարածքում բնակչության տեղաբաշխումը ըստ բնակավայրերի և դրանց համակարգերի, այսինքն՝ ձևավորված բնակավայրերի ցանցը կոչվում է.

1) բնակչության միջին խտություն
2) տարաբնակեցում
3) ագլոմերացիա
4) ուրբանիզացիա

Ա 23 Տնտեսության այն ճյուղերի ամբողջությունը, որոնք զբաղված են նյութական բարիքների արտադրությամբ, կոչվում են.

1) տրանսպորտ
2) գյուղատնտեսություն
3) արտադրական ոլորտ
4) ոչ արտադրական ոլորտ

Ա 24 Երկրի գյուղատնտեսական հողահանդակները կազմում են 18 մլն հա: Մեկ բնակչին բաժին է հասնում 3 հա գյուղատնտեսական հողահանդակ: Այդ երկրի բնակչության թիվը կազմում է.

1) 6 մլն.մարդ
2) 6,8 մլն. մարդ
3) 7 մլն. մարդ
4) 7,2 մլն. մարդ

Ա 25 «Ժողովուրդ-ազգային կրոն» սկզբունքով կազմված զույգերից ընտրել սխալը.

1) ճապոնացիներ- սինթոիզմ
2) չինացիներ-դաոսիզմ
3) հնդիկներ- հինդուիզմ
4) հրեաներ- կոնֆուցիականություն

Ա 26 «Մայրցամաք-պետություն» սկզբունքով կազմված զույգերից ընտրել ճիշտը.

1) Եվրասիա-Եթովպիա
2) Հյուսիսային Ամերիկա-Կոլումբիա
3) Հյուսիսային Ամերիկա-Կուբա
4) Աֆրիկա-Կոլումբիա

Ա 27 «էլեկտրաէներգիայի արտադրության հումք, աղբյուր-էլեկտրակայան» սկզբունքով կազմված զույգերից ընտրել սխալը.

1) միջուկային վառելիք-ատոմային
2) ջուր-մակընթացային
3) Արեգակ-հողմային
4) գազ-ջերմային

Ա 28 «Տրված պետություն-վարչական միավոր» զույգերից ընտրել սխալը .

1) ԱՄՆ-նահանգ
2) ՌԴ-հանրապետություն
3) ՀՀ-մարզ
4) Ֆրանսիա-վիլայեթ

Ա 29 Ժողովրդագրական պայթյունը բնորոշ է.

1) ՌԴ-ին
2) Մեծ Բրիտանիային
3) Կանադային
4) Հնդկաստանին

Ա 30 Ո՞ր պնդումն է սխալ.
1)Հյուսիսային Ամերիկան Հարավային Ամերիկային միանում է Պանամայի պարանոցով:
2)Հյուսիսային Ամերիկան Եվրասիայից բաժանվում է Բերինգի նեղուցով:
3)Հյուսիսային Ամերիկան ամբողջությամբ արևմտյան կիսագնդում է:
4)Հյուսիսային Ամերիկայի փոքր մասը հարավային կիսագնդում է:

Ա 31 «Պետություն-ավտոմոբիլային միավորում» սկզբունքով կազմված զույգերից ընտրել սխալը.

1) ՖԻԱՏ-Իտալիա
2) ԲՄՎ-Գերմանիա
3) ՎՈԼՎՈ-Շվեդիա
4) ՊԵԺՈ-Բելգիա

Ա 32 Ընտրել սխալ պատասխանը.

1) Թելատու տեխնիկական մշակաբույսերից բերքի ամենամեծ բաժինն աշխարհում բամբակենունն է:
2) Ցորենի ցանքատարածությունների մեծ մասը տեղաբաշխված է հյուսիսային կիսագնդում:
3) Աշխարհում արտադրվող շաքարի մեծ մասը ստացվում է շաքարի ճակնդեղից:
4) Պալարապտղային մշակաբույսերից ամենատարածվածը կարտոֆիլն է:

Ա 33 200 մլն-ից ավելի բնակչություն ունի.

1) Պակիստանը
2) Ինդոնեզիան
3) Ռուսաստանը
4) Բանգլադեշը

Ա 34 Դեպի ծով ելք չունեն.

1) Օմանը և Եմենը
2) Թուրքիան և Ալբանիան
3) Կամբոջան և ֆիլիպինները
4) Շվեյցարիան և Բոլիվիան

Ա 35 Հայկական լեռնաշխարհի գետերը սակավաջուր են.

1) ամռանը և ձմռանը
2) գարնանը, մասամբ աշնանը
3) միայն ձմռանը
4) միայն ամռանը

Ա 36 Հայկական լեռնաշխարհի ամենաերկար գետն է.

1) Ճորոխը
2) Արաքսը
3) Եփրատը
4) Տիգրիսը

Ա 37 ՀՀ-ում ամենամեծ ամպամածություն դիտվել է.

1) Աշտարակում
2) Գյումրիում
3) Մեղրիում
4) Իջևանում

Ա 38 Տնտրել ճիշտ պատասխանը.

1) ՀՀ-ում տարվա եղանակները հստակ արտահայտված չեն:
2) ՀՀ-ում առավելագույն չափով տեղումներ թափվում են ամռանը:
3) Լեռների բարձրությանը զուգընթաց տեղումների քանակը նվազում է:
4) Ամռան ամիսներին ՀՀ-ի տարած են ներթափանցում արևադարձային օդային զանգվածները:

Ա 39 ՀՀ-ում տարածքով ամենափոքր մարզն է.

1) Տավուշը
2) Շիրակը
3) Լոռին
4) Վայոց Ձորը:

Ա 40 Խաղողագործական շրջան չէ.

1) Արարատյան դաշտը
2) ՀՀ հյուսիս-արևելքը
3) Շիրակի դաշտը
4) Զանգեզուրի հարավը

Ա 41 ՀՀ ուրբանիզացման մակարդակը կազմում է.

1) 70%
2) 66%
3) 47%
4) 90%

Ա 42 Երկաթուղային հանգույց է.

1) Մեղրին
2) Ալավերդին
3) Իջևանը
4) Երևանը

Ա 43 Սպառվող չվերականգնվող ռեսուրսներ են.

1) հանքային ռեսուրսները
2) ջրային ռեսուրսները
3) կենդանական ռեսուրսները
4) կլիմայական ռեսուրսները

Ա 44 Բնական միջավայրում մարդու տնտեսական գործունեության հետևանքով տուժել են.

1) բույսերը և կենդանիները
2) հողերը և ջրերը
3) լեռնային ապարները և մթնոլորտը
4) բոլոր պատասխանները ճիշտ են

Ա 45 Ջրային ռեսուրսներով հարուստ երկիր է.

1) Մոնղոլիան
2) Կանադան
3) Սիրիան
4) Ալժիրը

Ա 46 Անտառների կրճատման հիմնական պատճառն է.

1) անտառային հրդեհները
2) պատերազմները
3) անասունների արածեցումը
4) մարդու տնտեսական գործունեությունը

Ա 47 Ռացիոնալ բնօգտագործման օրինակ է.

1) խոպան հողերի յուրացումը
2) թափոնների օգտագործումը որպես երկրորդային հումք
3) պարարտանյութերի արտադրության կրճատումը
4) Անտառահատումները

Ա 48 Ջրային ավազանները աղտոտող նյութ չէ.

1) Նավթամթերքները և նավթը
2) ծանր մետաղները
3) հոսքաջրերը
4) բույսերը

Ա 49 Քարտեզի վրա Հայկական ԱԷԿ-ը ո՞ր տառով է նշված.

1) Ա
2) Բ
3) Գ
4) Դ

Ա 50 Քարտեզի վրա Ախուրյանի ջրամբարը ո՞ր տառով է նշված.

1) Ե
2) Զ
3) Է
4) Ը




Ա 51 Ընտրել պետություն մայրաքաղաք ճիշտ զուգորդությունը

1) Ռուսաստանի Դաշնություն-Կիև
2) Ուկրաինա-Լոնդոն
3) Շվեյցարիա-Ցյուրիխ
4) Պերու-Լիմա

Ա 52 Քաղցրահամ ջրի հիմնախնդիրը բնորոշ չէ.

1) Ղազախստանին
2) Ալժիրին
3) Կանադային
4) Մեքսիկային

Բ մակարդակ

Բ 1 Ընտրել ճիշտ պատասխանը.

1) Երկիրն Արեգակի շուրջը պտտվում է արևմուտքից-արևելք ուղղությամբ:
2) Մարտի 21-ին հյուսիսային կիսագունդը հարավայինի համեմատ Արեգակից ավելի շատ լույս և ջերմություն է ստանում:
3) Հունիսի 22-ին Երևանում ցերեկը անելի երկար է, քան Նորիլսկում:
4) Ամսաթվի փոփոխման գիծն անցնում է 0˚ միջօրեականով, քանի որ այն անցնում է գրեթե անմարդաբնակ տարածքներով:

Բ 2 Երևանը գտնվում է արլ. ե 44˚ միջօրեականի, իսկ Հանոյը արլ. ե 103˚ միջօրեականի վրա: Նրանց միջև գոտիական ժամանակների տարբերությունը կլինի.

1) 3 ժամ
2) 4 ժամ
3) 5 ժամ
4) 6 ժամ

Բ 3 Ընտրել ճիշտ պատասխանը.

1) Հնդկական պլատֆորմը սահմանակցում է Չին-Կորեական պլատֆորմին:
2) Քիմիական հողմահարման ժամանակ նոր ապար չի առաջանում:
3) Օվկիանոսի հատակի 200-2500մ խորություններում տարածվում են օվկիանոսային անդունդները:
4) Հուանհեն և Յանցզին ունեն ամառային հորդացում:

Բ 4 Ընտրել բնության բաղադրիչների միակ ճիշտ զուգորդումը.

1) տունդրա- տունդրագլեյան-քարաքոս, մամուռ
2) անապատ- շագանակագույն-օշինդր, կակտուս
3) տայգա-կարմրահողեր-սոճի, եղևնի
4) տափաստան- սևահողեր-դափնի, հաճարենի

Բ 5 Այդ օդային զանգվածները ձևավորվում են ցածր ճնշման գոտում: Դրանք մշտապես տաք են և խոնավ: Այդ օդային զանգվածներն են.

1) հասարակածային
2) բարեխառն
3) արևադարձային
4) արկտիկական

Բ 6 Ընտրել ճիշտ պատասխանը.

1) Աֆրիկայում գերակշռում են սարահարթերը:
2) Սկանդինավյան լեռները մտնում են Ալպ-Հիմալայան գեոսինկլինալի մեջ:
3) Անտարկտիդան տարածքով զիջում է Ավստալիային:
4) Հարավային կիսագնդի ամենաբարձր գագաթը Մակ-Քինլի լեռն է:

Բ 7 Ընտրել ճիշտ պատասխանը.

1) Հանքային աղեր ու գազեր պարունակող աղբյուրների ջրերը կոչվում են հանքային աղբյուրներ:
2) Ջրակայուն շերտի վրա տեղադրված ջրատար շերտում եղած ստորերկրյա ջրերը կոչվում են ճնշումային ջրեր:
3) Արարատյան արտեզյան ավազանը հարուստ է գեյզերներով:
4) ՀՀ-ում ստորերկրյա ջրերի հոսքը ավելի մեծ է ծալքաբեկորավոր լեռնային մարզերում:

Բ 8 Ընտրել ճիշտ պատասխանը.

1) Տաք և սառը օդային զանգվածների շփումից առաջացած մրրկահողմերը Հյուսիսային Ամերիկայում կոչվում է տոռնադո:
2) Տարվա ընթացքում իրենց ուղղությունը երկու անգամ փոխող քամիները կոչվում են թայֆուններ:
3) Արևադարձերից դեպի բարեխառն փչող քամիները կոչվում են մուսսոններ:
4) Արևադարձերում օդի վերընթաց շարժման հետևանքով առաջանում են ցիկլոններ:

Բ 9 Ընտրել ճիշտ պատասխանը.

1) Սև մետալուրգիայի հումքը պղնձի հանքաքարն է:
2) Սև մետալուրգիայի վառելիքը կոքսացվող ածուխն է:
3) Գունավոր մետալուրգիայի հումքը երկաթի հանքաքարն է:
4) Գունավոր մետալուրգիայի վառելիքը նավթն է:

Բ 10 Սեռատարիքային այս բուրգը բնորոշ է.

1) Ինդոնեզիային
2) Սուդանին
3) Ֆրանսիային
4) Բրազիլիային



Բ 11 Այդ երկրում տիրապետում է իսլամի շիա ուղղությունը: Նավթ արտահանող երկրներից է: Այն ելք չունի դեպի Համաշխարհային օվկիանոս: Այդ երկիրն է.

1) Իրան
2) Ադրբեջան
3) Իրաք
4) Հորդանան

Բ 12 Ընտրել ճիշտ պատասխանը.

1) Հինդուիզմը և սինթոիզմը ազգային կրոններ են:
2) Ազգերը միմյանցից տարբերվում են մարդկանց թվաքանակով և արտաքին հատկանիշներով:
3) Ռասսաները միմյանցից տարբերվում են լեզվով ու մշակույթով:
4) Աշխարհի ամենամեծ ազգը ամերիկյան ազգն է:

Բ 13 Ընտրել սխալ պատասխանը.

1) Բամբակենին խոնավասեր ու ջերմասեր մշակաբույս է:
2) Վուշը խոնավասեր ու սակավ ջերմասեր բույս է:
3) Շաքարի ճակնդեղը կերային մշակաբույս է:
4) Արևածաղիկը տեխնիկական մշակաբույս է:

Բ 14 Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ, ո՞ր պնդումն է սխալ.

1) Հայկական լեռնաշխարհը գտնվում է մերձարևադարձային կլիմայական գոտում:
2) Հայկական լեռնաշխարհում լավ է արտահայտված հորիզոնական զոնայականությունը:
3) Հայկական լեռնաշխարհի կլիման ցամաքային է:
4) Հայկական լեռնաշխարհի մակերևույթին գերակշռում են դաշտավայրերը:

Բ 15 Ընտրել «լանդշաֆտային գոտի-բուսատեսակ» զույգերից ճիշտը.

1) անապատակիսաանապատային-կաղնի
2) տափաստանային-փետրախոտ
3) անտառային-ծառամման օշինդր
4) մերձալպյան և ալպյան-հաճարենի

Բ 16 Ընտրել գետերի և վտակների անվանումների տրված համապատասխանության ճիշտ շարքը.

| | |
|---|---|
| 1. Դեբեդ | ա. Գետիկ |
| 2. Հրազդան | բ. Շաքի |
| 3. Աղստև | գ. Ձորագետ |
| 4. Որոտան | դ. Գետառ |

1) 1-ա, 2-բ, 3-դ, 4-գ
2) 1-բ, 2-գ, 3-դ,4-ա
3) 1-ա, 2-դ, 3-գ, 4-բ
4) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ

Բ 17 Հայաստանի քիմիական արդյունաբերության զարգացմանը առավել նպաստել է.

1) որակյալ աշխատանքային ռեսուրսների առկայությունը,
2) ցեմենտի արտադրության զարգացումը,
3) երկրի աշխարհագրական դիրքը,
4) խոշոր քաղաքների առկայությունը:

Բ 18 Ընտրել Որոտանի համակարգի կասկադի ջրաէլեկտրակայանների շարքը ակունքից գետաբերան ճիշտ հաջորդականությամբ.

1) Շաքիի, Տաթևի, Շամբի
2) Շամբի, Տաթևի, Շաքիի
3) Տաթևի, Շամբի, Շաքիի
4) Շաքիի, Շամբի, Տաթևի

Բ 19 Ի՞նչն է ընդհանուր Սյունիքի և Վայոց Ձորի մարզերի համար:

1) Գյուղատնտեսության մասնագիտացման ճյուղը խաղողագործությունն է:
2) Գերակշռում են անտառային լանդշաֆտները:
3) Սահմանակից են Նախիջևանի Հանրապետությանը:
4) Արդյունաբերության մասնագիտացման ճյուղ է քիմիական արդյունաբերությունը:

Բ 20 Օդային ավազանով ՀՀ առավել մաքուր քաղաքներն են.

1) Գյումրին և Արթիկը
2) Քաջարանը և Ախթալան
3) Դիլիջանը և Իջևանը
4) Հրազդանը և Գավառը

Բ 21 Ջրաէներգետիկ ռեսուրսներով առավել ապահովված երկրներից են.

1) Սիրիան և Լիբանանը
2) Ֆինլանդիան և Շվեդիան
3) Իսպանիան և Պորտուգալիան
4) Իրանը և Թուրքիան

Բ 22 Անտառային ռեսուրսներով հարուստ երկրներ են.

1) Շվեդիան և Կանադան
2) Ուզբեկստանը և Ղազախստանը
3) Հայաստանը և Ադրբեջանը
4) Ուկրաինան և Մոլդովան

Բ 23 Բուսական ռեսուրսների պահպանման ու վերականգնման համար անհրաժեշտ չէ.

1) հիմնել արգելոցներ, արգելավայրեր ու ազգային պարկեր
2) ստեղծել կոլեկցիոն հողամասեր ու ռեզերվատներ
3) կազմակերպել կարգավորված արոտաշրջանառություն
4) հողերի ոռոգումը

Բ 24 Ավստրալիայի քարտեզի վրա, ո՞ր կլիմայական մարզն է նշված 2Ա- ով:

1) մերձարևադարձային խոնավ
2) արևադարևային ցամաքային
3) մերձարևադարձային միջերկրածովային
4) խոնավ արևադարձային




Բ 25 Ա տառով ՀՀ վերընթաց լանդշաֆտային ո՞ր գոտին է պատկերված քարտեզում:

1) Լեռնատափաստանային (սևահողային)
2) Անտառային
3) Մերձալպյան և ալպյան
4) Ջյունամերձ



Բ 26 Մարզում բնակչության թիվը 40000 է: Ծնելիության ցուցանիշը 24‰ է, մահացության ցուցանիշը` 8‰: Որոշել մարզի բնակչության բացարձակ թիվը մեկ տարի հետո:

1) 100000
2) 36640
3) 40000
4) 40640

Բ 27 Լեռան ստորոտին մթնոլորտային ճնշումը 720մմ է, իսկ լեռան գագաթին` 440մմ: Որոշել լեռան հարաբերական բարձրությունը:

1) 2500
2) 4200
3) 2800
4) 3600

Բ 28 Մարզի բնակչության թիվը 96000 է: Գյուղական բնակչության թիվը կազմում է 24000: Որոշել ուրբանիզացման մակարդակը:

1) 65
2) 75
3) 80
4) 55